

## Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Արմավիրի մարզի Փշատավան համայնքի 2016թ. ընթացքում կատարած աշխատանքների:

1-ին կիսամյակում հրավիրվել է ավագանու 5 նիստ, Առաջին նիստով փոփոխություն է կատարվել 2016թ բյուջեում:

Դրամական օգնություն է ցուցաբերվել համայնքի 15 անապահով ընտանիքներին, որի համար տրամադրվել է 400000 դրամ:

Համայնքի առևտրի օբյեկտների նկատմամբ պարբերաբար հսկողություն է իրականացվում:

Փշատավան համայնքի բնակիչներ Լիլիթ Գալստյանի, Ջյունա Մաֆարյանի և Գոհար Սարգսյանի ուսման վարձն է փոխանցվել :

Զիջվել է համայնքի սոցիալապես անապահով բնակիչների հողի հարկը և ավտոմեքենաների գույքահարկը: Երկրորդ նիստով փոփոխություն է կատարվել 2016թ բյուջեում:

Համայնքի ավագանին համաձայնություն է հայտնել համայնքի խմելու ջրի պոմպի հրատապ անհետաձգելի վերանորոգման համար:

<<ՄԵՐԶԱՓՆՅԱ >> ՋՕ-ին 250 000 դրամ է տրամադրվել :

3-րդ նիստով Համայնքի ավագանին իր համաձայնությունն է տվել համայնքի ղեկավարի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու հարցում: Երրորդ նիստով փոփոխություն է կատարվել 2016թ բյուջեում:

Հաստատվել է Զմրուխտ Կարապետյանի թեկնածությունը Փշատավանի գրադարանի վարիչի պաշտոնի համար:

Զիջվել է համայնքի սոցիալապես անապահով բնակիչների հողի հարկը և ավտոմեքենաների գույքահարկը:

30.01.2016թ կատարվել է շաբաթօրյակ, որի ժամանակ մաքրվել է համայնքի կենտրոնական ճանապարհները`

ինչքան ուսարագործ է բուհը կրթության համակարգում  
Բնակչությանը խմելու ջուր է մատակարարվում օրվա  
ընթացքում 4 ժամյա գրաֆիկով:

4-րդ նիստով գումար է տրամադրվել համայնքի 9  
անապահով ընտանիքներին տրամադրվել է 325000 դրամ  
դրամական օգնություն:

փոփոխություն է կատարվել 2016 թվականի բյուջեի և  
հաստիքացուցակի մասին որոշման մեջ:

4-րդ նիստով հաստատվել է Փշատավան համայնքի  
ղեկավարին կից խորհրդակցական մարմինների ձևավորման  
և գործունեության կարգը, ինչպես նաև հաստատվել է  
համայնքի ղեկավարի կամավոր լիազորությունների  
իրականացման կարգը:

Դրամական օգնություն է տրամադրվել համայնքի 6  
սոցիալապես անապահով ընտանիքների ընդհանուր  
առմամբ 290000 դրամ:

03.06.2016 թվականին համայնքի բնակիչների ,  
աշխատակազմի ներկայացուցիչների ներկայությամբ  
ներկայացվեց Փշատավան համայնքում հունվար,  
փետրվար և մարտ ամիսների ընթացքում համայնքի  
ղեկավարի կողմից կատարված աշխատանքների  
հաշվետվությունը:

5-րդ նիստով հաստատվել է Փշատավան  
համայնքապետարանի աշխատակազմի հաստիքացուցակը  
պաշտոնային դրույքաչափը: Դրամական օգնություն է  
տրամադրվել համայնքի միջնակարգ դպրոցի  
շրջանավարտներին, որը կազմում է 115000 դրամ , ինչպես  
նաև դրամական օգնություն է տրամադրվել համայնքի  
սոցիալապես անապահով նրակչությանը: Փշատավան  
համայնքի հակակարկտային կայանների սպասարկման

Փշատավան ճանապարհահատվածի հարակից տարածքը կուտակված աղբից:

Մարտի 3-10 ը կազմակերպվել է շաբաթօրյակ, որի ընթացքում մաքրվել է գյուղամիջյան այգու տարածքը, սպիտակեցվել է այգու ծառերի բները և կատարվել է ծառերի սանիտարական հատումներ:

Ախտահանվել է խմելու ջրի հորը քլորամինով:

Փշատավան համայնքի միջնակարգ դպրոցին վերջին զանգի առիթով գյուղապետարանը նվիրներ է հանձնել և շրջանավարտներին :

Հսկայական աշխատանք է տարվել գարնանը ցրտահարությունից և հարկտահարությունից տուժած տնային տնտեսությունների վնասները հաշվառման և գնահատման առումով, հաշվարկած և գնահատված տվյալները ուղարկվել է Արմավիրի մարզպետարան:

Գյուղապետարանը հսկայական աշխատանք է կատարել ծիրանի բերքահավաքի լիարժեք կազմակերպման համար. Գյուղում կան հողեր որոնք գտնվում են սահմանային գոտում , գյուղապետարանը կազմակերպել է անցագրերի տրամադրում , որպեսզի ծիրանի բերքահավաքը պատշաճ մակարդակով կատարվի, որի արդյունքում մեծ քանակությամբ ծիրան է արտահանվել է գյուղից:

2016 թվականի 1-իկ կիսամյակի ընթացքում համայնքի ղեկավարի կողմից ընդունվել է 37 որոշում, 6 կարգադրություն: Համայնքի բնակիչներին իրենց

դիմումներին ի պատասխան տրամադրվել է 350 տեղեկանքներ:

2-րդ կիսամյակում հրավիրվել է ավագանու 7 նիստ, Առաջին նիստով փոփոխություն է կատարվել 2016թ բյուջեում:

Դրամական օգնություն է ցուցաբերվել համայնքի 9 անապահով ընտանիքներին, որի համար տրամադրվել է 395000 դրամ:

Համայնքի առևտրի օբյեկտների նկատմամբ պարբերաբար հսկողություն է իրականացվում:

Հաստատվել է Փշատավան համայնքի քաղաքաշինության կանոնադրությունը :

Երկրորդ նիստով փոփոխություն է կատարվել 2016թ բյուջեում:

Դրամական օգնություն է ցուցաբերվել համայնքի 8 անապահով ընտանիքներին, որի համար տրամադրվել է 600000 դրամ:

Տրվել է թույլտվություն Փշատավան համայնքի բնակիչ Ազնիվ Մնացականյանի տանու հարակից բարդու ծառի ծառահատման թույլտվությունն միջամտություն է կատարվել ՀՀ Արմավիրի մարզի Արտակարգ իրավիճակների ստորաբաժանմանը իրենց տեխնիկայի միջոցով կատարել ծառահատումը:

2016 թվականի հունիս 22-ից մինչև 2016 թվականի հուլիսի Փշատավան համայնքում իրականացվել է Վարչական ստուգումներ որից հետո ըստ կայացրած ակտի վերացվել են հայտնաբերած բոլոր թերությունները:

8-րդ նիստով դրամական օգնություն է տրամադրվել համայնքի 5 սոցիալապես բնակիչներին ընդհանուր առմամբ տրամադրվել է 360000 դրամ :

Նույն նիստով փոփոխություն է կատարվել Փշատավան համայնքի 2016 թվականի բյուջեում:

Փշատավան համայնքի միջնակարգ դպրոցի ՊՈԱԿ-ի կողեգիալ կառավարման խորհրդի կազմում հաստատվել է Հերմինե Հակոբյանի թեկնածությունը:

Ընդունվել է համայնքի ղեկավարի 7 որոշում, 1 կարգադրություն

Համայնքի ավագանին համաձայնություն է հայտնել համայնքի խմելու ջրի պոմպի հրատապ անհետաձգելի վերանորոգման համար:

9-րդ նիստով փոփոխություն է կատարվել 2016թ թյուջեում: Փշատավան համայնքի սոցիալապես անապահով 5 ընտանիքների տրամադրվել է 132000 դրամ դրամական օգնություն: Հաստատվել է Փշատավան համայնքապետարանի աշխատակազմի կանոնադրությունը :

2016 թվականի սեպտեմբերի 18-ին Փշատավան համայնքում տեղի ունեցավ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններ, ընտրվեց Փշատավան համայնքի ավագանին:

10-րդ նիստով 2016 թվականի նոյեմբերի 24-ին տեղի ունեցավ նորընտիր ավագանու Անդրանիկ նիստը, որում հաստատվեց նրանց լիազորությունները և ընդունվել ավագանու Կանոնակարգի մասին որոշում:

30.09.2016թ կատարվել է շաբաթօրյակ, որի ժամանակ մաքրվել է համայնքի կենտրոնական ճանապարհները՝ կուլտուրայի տան և հարակից այգու տարածքը կուտակված աղբից:

Խմելու ջրի ջրագիծը բավականին հին է, որի պատճառով անխուսափելի են ջրագծի վթարները : Բավականին աշխատանք է տարվել որպեսզի ձմռանը ինչքան հնարավոր է քիչ լինեն նմանատիպ վթարներ:

Բնակչությանը խմելու ջուր է մատակարարվում օրվա ընթացքում 4 ժամյա գրաֆիկով:

11-րդ նիստով հաստատվել է Փշատավան համայնքի համայնքային ծառայողների մրցույթային և ատեստավորման հանձնաժողովի ավագանու անդամների անհատական և քանակական կազմը:

Հաստատվել է Փշատավան համայնքի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը:

Փոփոխություն է կատարվել Փշատավան համայնքի 2016 թվականի բյուջեում, Հաստատվել է Փշատավան համայնքի 2017 թվականի բյուջեն և համայնքապետարանի աշխատակիցների հաստիքացուցակը և դրույքաչափերը:

Դրամական օգնություն է տրամադրվել համայնքի 8 սոցիալապես անապահով ընտանիքների ընդհանուր առմամբ 600000 դրամ:

Համայնքի գյուղամիջյան ճանապարհների մեծ մասը անանցանելի են, այս վիճակը մեղմացնելու համար հարթվել և ավագ է լցվել այդ ճանապարհների վրա Փշատավան-Ջանֆիդա ասֆալտապատ ճանապարհը վերանորոգման կարիք ունեն, որի պատճառով համայնքի միջոցներով վերանորոգվել է:

01.12.2016թ. համայնքում իրականացվել է շաբաթօրյակ, որի արդյունքում աղբից մաքրվել է Արգավանդ-Փշատավան ճանապարհահատվածի հարակից տարածքը կուտակված աղբից:նոյեմվերի 3-10 ը կազմակերպվել է շաբաթօրյակ, որի ընթացքում մաքրվել է գյուղամիջյան այգու տարածքը, կատարվել է ծառերի սանիտարական հատումներ:

Ախտահանվել է խմելու ջրի հորը քլորամինով:

Փշատավան համայնքի միջնակարգ դպրոցին Ամանորի գյուղապետարանը նվիրներ է առաջինից չորրորդ դասարանի աշակերտներին :

Հսկայական աշխատանք է տարվել գարնանը ցրտահարությունից և հարկտահարությունից տուժած տնային տնտեսությունների վնասները հաշվառման և գնահատման առումով, հաշվարկած և գնահատված տվյալները ուղարկվել է Արմավիրի մարզպետարան:

Գյուղապետարանը հսկայական աշխատանք է կատարել խաղողի բերքահավաքի լիարժեք կազմակերպման համար.

արտառասագել և գլուկրց.

2016 թվականի 1-ից կիսամյակի ընթացքում համայնքի ղեկավարի կողմից ընդունվել է 55 որոշում, 6 կարգադրություն: Համայնքի բնակիչներին իրենց դիմումներին ի պատասխան տրամադրվել է 380 տեղեկանքներ:

2016 թվականի կիսամյակի հողի հարկի և գույքահարկի հավաքագրումը հետևյալն է՝

|             |                  |                  |
|-------------|------------------|------------------|
| 2016 թվական | հողի հարկ        | 3710.5 հազ. դրամ |
|             | գույքահարկ       | 2506.9 հազ. դրամ |
|             | հողի վարձավճար   | 23.5 դրամ        |
|             | տեղական տուրք    | 84.5 հազ. դրամ   |
|             | Խմելու ջրի վարձ. | 476.0 հազ. դրամ  |

**Փշատական համայնքի հիմնախնդիրներ՝**

1. Փշատական համայնքի մշակույթի տան տանիքի վերանորոգում:
2. Փշատական Արգավանդ ճանապարհի կապիտալ նորոգում:
4. Համայնքի լիարժեք գազաֆիկացում:

Համայնքի ղեկավար

Ա.Քյարամյան